

ԵՐԳ ԷՋՄԻԱԾՆԻ
ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ ՎԱՋԳԷՆ Ա-ԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ*

Երկինքը վճռեց՝
եւ հաւատամքի արարողութիւնը
բացաւ իր թեւերը
դէպի աղօթարանդ

եւ հայ մարդը
մօտեցուց իր քայլերը
դէպի սուրբ աղօթքը
եւ մտորումը
քեզ ոգեկոչելու:

Արքայական՝
—արծիւի թռիչքով—
տեղադրուեցար
ամէն սպիտակ
զգացումի մէջ
եւ մենք
մեր արմատին ճամբով
նաեւ քեզի պատկանեցանք:

Էջմիածին.
Դարերով ծանրաբեռնուած
հպարտ գմբեթ.
հայրենական տուն.
իջեւանը Միածինի.
Հնամեայ արձագանգ
հայոց շարականներուն:

Հրաշքներու տուն
որ շոյեց ու փայփայեց
յոյսը հաւաքական:

Աչքերդ՝
վկայ եղան
պատմութեան:

Արցունքդ՝
զտարան
մեր այն երազներուն
որ աղաւնիները
ստորագրեցին:

Ժպիտդ՝
—երբեմն տժգոյն
ու չարչարուած—
ծածկեց
վէրքերը
ճակատագրին:

Էջմիածին.
քե՛զ կ՚երգեմ
լոութեան եօթը կնիքներով
եւ Ցայտնութեան հզօրութեամբ:

Քե՛զ կ՚երգեմ
եւ կ՚ընկալեմ պատգամդ
ինչպէս սնունդ:

Քե՛զ կ՚երգեմ
եւ կը համբուրեմ
ժամանակներ սեղմող
պատերդ
աւանդութեան վկայ
հողդ
փոթորիկներ փոշիացնող

---

* Սիրված ու հանրածանոթ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը իր սույն գողտրիկ ու հպաշունչ բերթվածը նվիրել է Վեհափառ Հայրապետին՝ վերջերս Նրա արտասահման կատարած հովվապետական ազդեցությանը:

Սիրով մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ալիսիա Կիրակոսյանի սույն բերթվածը:

խաչերդ
հոգիներ օծող
լոյսդ։

Տուներու տուն
դրոշմուած՝
ամրութեամբ եւ սիրով
ժառանգուած
հայոց պապերէն։

Սրբարաններու
սրբարան
Ուր ոտաբոպիկ Աստուած
կ'այցելէ
կարօտը կաշառելու
եւ փշրուած երազները
նորոգելու համար։

Կանգուն ճարտարապետութիւն
ատրուշանին վրայ գամուած
որ ծունկի գալով
իր աղօթքներու մէջ
ամպեր կը ճեղքէ։
Քե՛զ կ'երգեմ
ի՛մ Էջմիածին
հարազատ զաւակի
ելեքտրական պաշտամունքով։
Ես կ'երգեմ քեզ
հաւատացեալին
խտացած նուիրումի
հաւատքով։

Ես կ'երգեմ քեզ
այն սրբազան խոնաւութեամբ
որ փակուած է
զտուած արտասուքի մէջ.
Եւ երգիս մէջ
հաւաքած եմ
բոլոր սէրերը
հաւատամքի.
սերեր
որ ցանուած են
այն մարդուն
ապագային մէջ
որ ընդմիշտ պիտի ապրի
լոյսիդ հետ պսակուած

քանզի դուն ես
Ալֆան
եւ ճանապարհը
հաստատութիւնը
եւ շունչը
տեւականութիւնը
եւ թռիչքը։

Աստուա՛ծ
—այս կեանքի մէջ—
տնօրինէ՛ այնպէս
որ իմ երգը
Էջմիածնի համար
ըլլայ քո՛ւ երգը
եւ անով
լուսաւորեա
հայուն
բոլոր աղօթքները։

ԱԼԻՍԻՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(1981—գրված հայերեն)